

## ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

### ՍԻՓԱՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԲԸ

Տարագրութեան մէջ, գոյութեան պայտաբի դիրքերում, ազգային ինքնապաշտպանութեան գորաւոր գէնքերից մէկն էլ, անկասկած, հայ երգն է: Երգը իբրև ոգեւորող ու բարձրացնող, համադրող ու գոգող ոյժ: Թափանցելով հասարակութեան բոլոր խւերի մէջ, մտնելով ընտանիքից ներս, բոյն դնելով մարդկանց հոգիներում՝ երգը ազգային զգացմունքի շերտերեամբ համակում է ժողովրդի սիրտը եւ հայկական ցան ու ցիւր բեկորները կապում միացնում է ազգային ամբողջութեան հետ: Մանաւանդ հաւաքական ստեղծագործութեան արգասիքը հանդիսացող ժողովրդական երգը, որի զւարթ լէլէները կենարար աւիշի պէս թարմացնում ու կենդանացնում են գաղութահայութեան ուժանայու վտանգին ենթակայ միտքն ու հոգին:

Հակառակ դրան, հայ երգի դաստիարակող ու կազմակերպող դերի վերա մեր մէջ, դժբախտաբար, լուրջ ուշադրութիւն չէ դարձած: Եթէ դպրոցը, տպագրական խօսքը, որոշ չափով նաեւ մարզական գործը քիչ-շատ հանրային հոգածութեան աւարկայ դարձած են, երգը, ինչպէս եւ բեմն ու նրկարչութիւնը, բոլորովին լքւած, գրեթէ ամբողջովին թողնւած է անհատական նախաձեռնութեան: Արտասահմանում գոյութիւն չունի եւ ոչ մի հրատարակչական ձեռնարկ, որ նպատակ դրած լինէր հայերէն երգի հրատարակութիւնը: Եթէ չհաշուենք մի քանի

դպրոցական կամ եկեղեցական խմբեր, գոյութիւն չունի եւ ոչ մի երաժշտական կամ երգեցիկ խումբ, որի կազմութեան կամ ապահովութեան մէջ մասնակցէր որեւէ հաւաքական ոյժ: Հայ մշակոյթի պաշտպանութեամբ հետաքրքրւող ոչ մէկ կազմակերպութիւն, մէջը լինելով եւ Համազգայինը, Հ. Կ. Խաչն ու Բարեգործականը, որեւէ ծգրագրւած աշխատանք չունեն՝ ստուարելու համար հայ երգի տարածման ու ժողովրդականացման:

Վերջին 10-15 տարւայ ընթացքում, արտասահմանի հայաբնակ շատ վայրերում, մէկից աւելի երգչախմբեր են ծնունդ առել. ոմանք կարճատեւ կեանքից յետոյ մեռել են, ուրիշներ շարունակում են գործել աւելի կամ պակաս յաջողութեամբ, չենք յիշում, սակայն, մէկ հատիկ լուրջ դէպք, որ այդ խումբերից մէկն ու մէկը հասարակական կազմակերպւած աշխատանքի արդիւնքը լինէր. միշտ գործի նախաձեռնութիւնն ու ղեկավարութիւնը բխել է անհատ երաժշտականներից: Մի Մեհրապետան կամ Սրանձանան Ամերիկայում, մի կանաչեան Սիւրիայում, մի կառավարեց Զոնտատանում, մի Նազարեան՝ Եգիպտոսում, վերջապէս, մի Սաֆօ Յակոբեան, մի Վ. Սարգսեան, Ա. Պարթեան կամ Ալէմշահ Ֆրանսայում - սրանք եւ սրանց նման ուրիշներ սոսկ անհատներ են, որ անհմարին, կարելի է սսել, հերոսական գոռոզութիւններով սպասաւորում են հայ երգի ու երա-



ՓԱՐԻՑԻ «ՄԻՓՈՆ» ԵՐԿՈՒՆՈՒՄԸ

ժըշտութեան աստածուհուն: Եթէ այսօր հայ երգն ու նւագը այսօր տարածւած են գաղութահայերի զանգւածներէ մէջ, միայն ա՛յս մարդկանց քափած անձնական նիւթերն ենք պարտական: Եւ անհրաժեշտ է, որ զոնք մեր Լաւրային կարծիքի արտայայտիչ մամուլը խնամֆոս գուրգուրանֆով արձանագրէ այդ գաղափարական անհատներին աշխատանքն ու տւած օգուտը:

Այս անգամ մենք կուգե՛նք մի քանի խօսք ստել Փարիզի «Սիփան» երգչախումբի մասին. որի հիմնադիր եւ ղեկավար Սաֆօ Յակոբեանի մեկնումովը դէպի Հարաւային Ամերիկա փակւեց նրա գործունէութեան առաջին շրջանը եւ սկսեց նորը, Ա. Պարթեւեանի ղեկավարութեան տակ:

12 տարի առաջ, 1923-ին, հիմնեց «Սիփան» երգչախումբը: Սաֆօ Յակոբեանը նոր էր եկել Փարիզ եւ ինչպէս շատ տարագիրներ, աշխատում էր գործարանում: Կոմիտասի աշակերտ, ներշնչւած մեծ արեւսագետի օրինակով, գործարանի ծանր մթնոլորտում էլ նա կարողացաւ վառ պատել իր ուսուցչից ծառանգած անշէջ հուրը եւ հետըզհետէ իր շուրջ համախմբելով իր նրման երիտասարդ աշխատաւորներ՝ հիմքը դրեց «Սիփան» երգչախումբի: Փարիզի գաղութը դեռ նոր էր կազմուում. մարդկանց հոգիներում տակաւին մղկտում էր չգոցւած վէրքեր: «Սիփան»-ը դարձաւ նրանց համար յուսատու մի շող, որ հանդէսների բեմերից տարածեց գաղթական տաղաարները. տարագիր հոգիներից ներս, Հայաստանի լեռների ու դաշտերի շունչը փոխադրեց Սէնի եզերները, Արագածի ու Սիփանի ջրերի կարկաչը, հայրենիքի արեւն ու ծպիտը, ապրելու եւ յաղթելու տենչը ներշնչեց շարած բազմութիւններին:

«Սիփան»-ի յաջողութեան գլխաւոր պայմանը եղաւ այն, որ նա «բարձր» արեւստի յետեւից չընկաւ: Թէկուզ եւ

Փարիզում, հայ զանգւածի հոգին դեռ պարզ էր ու նահապետական. «Սիփան»ը կարողացաւ հասկանալ ու խօսել այդ հոգուն մատչելի ենչիւններով: Ու հետըզհետէ, խիստ համեստ սահմաններում սկսւած փոքրիկ գործը մեծացաւ, տարածւեց, դարձաւ ժողովրդական եւ կատարելագործւեց լայնֆով ու խորֆով: Նոյն իսկ դուրս եկաւ հայկական շրջանակից, հայ երգը հասցնելով նաեւ փրանսացիներին. որոնք ջերմապէս սիրեցին ու գնահատեցին մեր արեւստի գեղեցկութիւնները: Վերջին տարիները երգչախումբը օժտւեց նաեւ նուրբ նաշակով պատրաստւած ազգային հագուստներով, որոնք մեծապէս նպաստեցին նրա ժողովրդականացման յաջողութեան: Այն անվերապահ ջերմ համակրբանքը, որ հասարակութիւնը ցայց տրւեց «Սիփան»-ի ձեռնարկներին, այն զբարբ ու խանդավառ մթնոլորտը, որ տիրական էր միշտ խմբի հանդէսներում, միւս կողմից «Սիփան»-ի բազմաթիւ յաջող հանդէսները, մանաւանդ, կոմիտասին նւիրւած խանդավառ համերգը, և «Անուշ»-ի փետր. 2-ի, փայլուն բեմադրութիւնը ապացոյց են, որ րափւած նիւթերը եւ նիւթական ու բարոյական գոհողութիւններն ապարդիւն չեն անցել:

Այժմ, երբ «Սիփան»-ի 12 տարւայ կեանքը այլեւս պատմութիւն է, աւելի հեշտ է նկատել նրա կատարած գործի կարեւորութիւնը: Եթէ այսօր հայ երգը այնքա՛ն տարածւած է Փարիզի եւ արարձանների 20-25 հազարնոց հայ գաղութի մէջ, եթէ բուրբերէն երգերը գրեթէ իսպառ վտարւած են հայ տներից, եթէ այնքա՛ն երիտասարդներ եւ օրիորդներ իրենց զգացմունքները այսօր արտայայտում են հայերէն երգով, հայ երգի ժողովրդականացման այս գործում, անկասկած, առաջին տեղը պատկանում է «Սիփան»-ին:

Այս տեսակետից, բարբ համեմատու-

քիւններն, անշուշտ, պահելով, Սաֆօ Յակոբեանը շարունակողն է իր տաղանդաւոր հայրենակից Բրիտտափոր Կարա-Մուրզայի գործի: Կարա-Մուրզան առաջինը եղաւ, որ ազգային ու ժողովրդական երգը կովկասում դարձրեց ընտանիքի ու հանրային հաւաքային սեփականութիւն եւ մանապարհ բաց արաւ կոմիտասների հա-

մար: «Սիփան» նոյն դերը կատարեց, աւելի համեստ պայմաններում, փարիզական գաղութի մէջ: Յուսանք, որ իր կեանքի նոր շրջանում էլ «Սիփան»-ը կը շարունակէ իր հիմնադրի աւանդութիւններն ու նպատակները եւ կը մնայ ժողովրդական լայն զանգածների սիրելին:

### ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՆԻ ՆԱՎՈՐՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Օգոստոս 18-ին, Բուլղարահայ գաղութը ժողովրդական ջերմ խանդավառութեամբ հանդէսներ կատարեց հայ մեծանուն յեղափոխական Քր. Միքայելեանի մահուան երեսնամեակի եւ բուլղար նշանաւոր բանաստեղծ Փէիւ Նավորովի արձանի բացման առթիւ: Արձանը, գործ արձանագործ Գ. Ահարոնեանի, կառուցած է հայերի նախաձեռնութեամբ եւ հաւաքած միջոցներով:

Նավորովը նշանաւոր է իր «Արժեքի» (Հայերը) ոտանաւորով, որ եթէ հայերի համար Երանգ է իր բովանդակութեամբ, բուլղար գրականութեան մէջ յայտնի է, որպէս գեղարւեստական մեծարժէք գործ, բուլղար բանաստեղծութեան գոհարներից մէկը: Առաջ ենք բերում այդ ոտանաւորը բանաստեղծ Արմէն Սեւանի թարգմանութեամբ:

### ՀԱՅՆԻ

Հալածւածներ բշտառ, չնչին բեկորներ՝  
 Ժողովուրդի մ'արի, այսօր նահատակ,  
 Ահարեկ ու գերի մօր մը գաւակներ,  
 Զոհեր՝ անհունօրէն վսեմ ֆաջութեան,  
 Հայրենիքէն հեռու օտար երկնի տակ,  
 Հիւծած, գունատ, հաւաքած տուն մը խարխուլ,  
 Կըմպեն, ու իրենց կարիւնի սիրտը՝ վէրքէն.  
 Կերգեն, ինչպէս երգն՝ արցունքին ընդմէջէն:

Անոնք կերգեն. կուգեն մոռնալ՝ հարբելով՝  
 Հին տառապանքն ու ցաւերը այսօրուան,  
 Յիշատակը խեղդել հրաշունջ գիւնիով,  
 Քընացընել հոգին ջախջախ կրծքին տակ,  
 Կուգեն՝ հակած գանկերուն մէջ անհետի  
 Տառապագին պատկերն անոր մայրական.  
 Կուգեն անոր օգնութեան կանչը վերջին  
 Ա՛յլ չը լսել, մոռացութեան մէջ գիւնով:  
 Հօտ մը՝ ինչպէս գազանէ մը հալածւած,